գալեանի գրած տաղաչափութիւն (1891), Մի Պուլկար հայրենասէր (1894), Վարդապետարան Հայաստանի ազատութեան, Իմ հայրապետ ընկերը:

**ՄՕՆՈԳՐԱՖԻԱ** ի մէջ այս տարուան հրատարակուիլ սկսած է.

262. **Ա. Տէր Բաղդասարեանի Փորձ** երկամսեայ հանդէս՝ գրական, գեղար. և գիտ. (Յուն. - Օգոստ. 1912, Ա. տարի, թիւ 1): — Հասցէ՝ Յօհրընի փողոց, թիւ 5:

## ԳԼՈՒԽ Ե.

| 1640էն սկսեալ | ՊԱՐՍԿԱՍՏԱՆ | մինչև 1912 |
|---|---|---|

### ՆՈՐ-ՋՈՒՂԱ

263. **Ամենափրկիչ Վանքի Տպարանը.** — Պարսկաստանի երկրորդ արքայանիստ քաղաքին՝ Սպահանի (որ առաջ ԾՕԾ կը կոչուէր) գիւղաքաղաքն էր ՆՈՐ-ՋՈՒՂԱ, ուր Հայերը Ամենափրկիչ անունով վանք մը ունէին: «Շահաբեկեան» բազմութեամբ սրով, անոր առաջնորդն էր ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՍԱՐԱՑԻ, Սիւնեաց դպրոցի աշակերտներէն, որ իր ժամանակին ուսումնական հռչակուած հոգեւորական մըն էր բազմաշնորհ, աշխատասէր և անխոնջ: 1630 ին Մովսէս կաթողիկոսի որոշմամբ՝ այդ առաջնորդութիւնը թողուց, Լեհաստան կ'ուղարկուի Սիմէոն արեղային հետ՝ կրօն. խնդիրներու կարգադրութեան համար: Վերադարձին, Երեւան կը հանդիպին Լէմ անապատի Մելքիսեդեկ գիտուն վարդապետին որմէ մեծ եռանդով կ'սկսին դաս առնել, եւ բոլոր իրենց ըրած ճամբորդութեան ընթացքին՝ համոզուած ըլլալով թէ ո՛րքան բան կար սորվելիք: Խաչատուր Կեսարացին նման արթնամիտ մէկը չէր կրնար այլ եւս անտարբեր մնալ իր ազգին լուսաւորութեան գործին հանդէպ. և երբ նորէն առաջնորդ եղաւ, Ն. Ջուղայի Ամենափրկիչ վանքը ժողվեց աշակերտներ, որպէս զի անոնք կրթուին ու յառաջդիմեն: Այդ դպրեվանքը — զոր իրենք «Մեծաստան կուսակրօնից բանաւորաց» կ'անուանեն, իսկ Ջուղայի



1642ին Ամենափրկիչ վանքը տպ. «Ատենի Ժամագրքէն» էջ մը